AMX Armenia Securities Exchange

ԳԼԽԱՎՈՐ ՏՆՕՐԵՆԻ ՈՐՈՇՈՒՄ

24 դեկտեմբերի 2021 թվականի N ՑՊ-038-12/21

ք. Երևան

«ՅՈՒՆԻԲԱՆԿ» ԲԱՑ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԱՐԺԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԸ ՑՈՒՑԱԿԵԼՈՒ ԵՎ ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԻ ԵՐԿՐՈՐԴԱՅԻՆ (Bbond) ՑՈՒՑԱԿՈՒՄ ԸՆԴԳՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «ՅՈՒՆԻԲԱՆԿ» բաց բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ Թողարկող) կողմից 2021 թվականի դեկտեմբերի 15-ին ներկայացված հայտը 5,000,000 ԱՄՆ դոլար ընդհանուր անվանական ծավալով, 100 ԱՄՆ դոլար անվանական արժեքով, 36 ամիս շրջանառության ժամկետով, տարեկան 4.8% արժեկտրոնային տոկոսադրույքով, 50,000 հատ անվանական, արժեկտրոնային պարտատոմսերը ցուցակելու և պարտատոմսերի երկրորդային (Bbond) ցուցակում ընդգրկելու վերաբերյալ, ինչպես նաև «Հայաստանի ֆոնդային բորսա» բաց բաժնետիրական ընկերության (այսուհետև՝ Օպերատոր) Ցուցակման հանձնաժողովի կողմից 2021 թվականի դեկտեմբերի 24-ին ներկայացված եզրակացությունը,

Ղեկավարվելով Օպերատորի «Արժեթղթերի ցուցակման և առևտրին թույլատրման կանոնների» 12-րդ գլխի 55 կետով և Օպերատորի կանոնադրության 9-րդ գլխի 9.59) կետի զ) ենթակետով, Գլխավոր տնօրենը

ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. «ՅՈՒՆԻԲԱՆԿ» ԲԲԸ-ի 5,000,000 ԱՄՆ դոլար ընդհանուր անվանական ծավալով, 100 ԱՄՆ դոլար անվանական արժեքով, 36 ամիս շրջանառության ժամկետով, տարեկան 4.8% արժեկտրոնային տոկոսադրույքով, 50,000 հատ անվանական պարտատոմսերը, որոնց «Հայաստանի Կենտրոնական Դեպոզիտարիա» ԲԲԸ-ի կողմից շնորհվել է AMUNIBB2IER5 ծածկագիրը, ցուցակել և ընդգրկել պարտատոմսերի երկրորդային (Bbond) ցուցակում, շնորհել UNIBBI հապավումը, ինչպես նաև թույլատրել դրանցով հասցեական և ռեպո գործարքների կնքումը:
2. Հայտերի (առաջարկների) ներկայացման և գործարքների վերջնահաշվարկը կատարել ԱՄՆ դոլարով:
3. Սույն որոշման ընդունման օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում որոշման մեկ օրինակն ուղարկել Թողարկողին:
4. Սույն որոշման ընդունման օրվանից մեկ աշխատանքային օրվա ընթացքում որոշման մասին տեղեկություններ հրապարակել Օպերատորի առևտրային համակարգի և ինտերնետային կայքի միջոցով համապատասխան ստորաբաժանումների կողմից:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2021 թվականի դեկտեմբերի 29-ին:

ԳԼԽԱՎՈՐ ՏՆՕՐԵՆ՝ ՀԱՅԿ ԵԳԱՆՅԱՆ